«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» դաշինքի պատասխանը «Ազգային կրթության խորհրդի» բաց նամակին

Հարգելի՛ «Ազգային կրթության խորհրդի» անդամներ,

Շնորհակալություն ենք հայտնում կրթության և գիտության ոլորտի ապագայի վերաբերյալ հանրային կարևոր քննարկում նախաձեռնելու համար: «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» դաշինքը լիովին կիսում է այն համոզմունքը, որ Հայաստանի Հանրապետության զարգացումն անհնար է առանց ազգային արժեքների վրա հիմված, մրցունակ և ապագային միտված կրթական ու գիտական համակարգի:

Ձեր բարձրացրած հարցերին պատասխանում ենք հետևյալ կերպ.

Ա. Հանրակրթության բովանդակության ազգային-քաղաքակրթական հիմքերի վերաբերյալ

Այո՛: «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» դաշինքը համոզված է, որ հանրակրթության բովանդակությունը պետք է ձևավորվի հայ ժողովրդի ազգային ինքնության, պատմական հիշողության, մշակութային ժառանգության, պետականության և քաղաքակրթական առաքելության գիտակցման հիման վրա: Մենք կարևորում ենք համամարդկային արժեքների և ժամանակակից գիտելիքների համադրումը ազգային արժեհամակարգի հետ՝ բացառելով կրթության ապազգայնացման ցանկացած դրսևորում: Հայ դպրոցը պետք է դաստիարակի գիտակից, հայրենասեր, պատասխանատու և զարգացած քաղաքացի:

Բ. Դպրոցների փակման ծրագրի վերաբերյալ

Այո՛: Դաշինքը դեմ է դպրոցների մեխանիկական փակման քաղաքականությանը, հատկապես սահմանամերձ, գյուղական և փոքր համայնքներում, որտեղ դպրոցը ոչ միայն կրթական հաստատություն է, այլև համայնքային կյանքի, մշակույթի և ազգային անվտանգության կարևոր բաղադրիչ: Իշխանություն ձևավորելու պարագայում մենք կվերանայենք ներկայում շրջանառության մեջ գտնվող 229 դպրոցների փակման ծրագիրը և կապահովենք, որ յուրաքանչյուր որոշում կայացվի բացառապես կրթության որակի բարելավման, երեխաների շահերի և համայնքների կենսունակության պահպանման սկզբունքներով, հաշվի առնելով տվյալ բնակավայրի քաղաքացիների կարծիքը:

Գ. Բարձրագույն կրթության և գիտության ազգային ռազմավարության վերաբերյալ

«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» դաշինքը առաջնահերթ է համարում բարձրագույն կրթության և գիտության ոլորտների արմատական զարգացումը: Մենք նախաձեռնելու ենք կրթության, գիտության, նորարարության և տեխնոլոգիական զարգացման երկարաժամկետ ազգային ռազմավարության մշակում և

իրականացում՝ ուղղված հայկական բուհերի մրցունակության բարձրացմանը, գիտական ներուժի պահպանմանն ու ընդլայնմանը, երիտասարդ գիտնականների խրախուսմանը, ինչպես նաև գիտության և տնտեսության միջև արդյունավետ կապի ձևավորմանը։ Համոզված ենք, որ գիտելիքահենք տնտեսության և պետության կառուցումը Հայաստանի անվտանգության, զարգացման և միջազգային մրցունակության կարևորագույն նախապայմաններից է։

Վստահ ենք, որ կրթության և գիտության շուրջ համազգային համաձայնության ձևավորումը մեր պետականության ամրապնդման կարևորագույն գրավականներից է։